ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР. БИОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ АРМЕНИИ

т. XXVI, № 2, 1973

ՌՈՒԶԱՆՆԱ ԱՂԱՋԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կյանքից հեռացավ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի հնագույն աշխատակից Ռուզաննա Աղաջանի Կարապետյանը։ Կյանքի շուրջ 40 տարիները նա մեծ եռանդով նվիրեց սիրած մասնագիտությանը, իր ավանդը ներդնելով հերբարիումի ստեղծման գործում։ Ինստիտուտում աշխատելու առաջին իսկ օրերից (սկզբում բնապատմական թանգարանում) նա ի մի է բերել, խմբավորել նշանավոր բուսաբանների հավաքած և որոշած նմուշները, կազմակերպել հավաքածուի պահպանումը։

Նա ակտիվ մասնակցել է նաև հանրապետության ֆլորիստական հարստության ուսումնասիրման նպատակով կազմակերպվող գիտարշավներին։ Դժվար թե լինի Հայաստանի մի շրջան կամ վայր որտեղից նա բույսեր հավաքած չլինի։ Մինչև վերջին ժամանակներս իր աշխատանքային ընկերների հետ նա խանդոտ սիրով հետևում էր հերբարիումի բույսերի պահպանմանը, սահմանելով այնտեղ ցուցադրական կարգ ու կանոն։

Սևանա լճի իջեցման հենց առաջին տարիներից նրան հանձնարարվում է ջրից ազատված հողապրունտներում բուսականության ձևավորման և բնական աճման պրոցեսների ուսումնասիրման թեման։ Այդ հազվադեպ պրոցեսի ուսումնասիրման առաջին իսկ էտապները նրան բերեցին ավազանի տարբեր հողապրունտների և բուսակազմման բնույթի միջև եղած հետաքրքիր օրինաչափությունների վեր հանման, որոնք հիմք հանդիսացան մի շարք գիտական հոդվածների և հաղորդումների հրապարակմանը։ Այս աշխատանքները ամփոփվեցին նրա թեկնածուական դիսերտացիայում (1960 թ.)։

Ավելի վաղ մասնակցել է ՀՍՍՀ ջրա-ճահճային ֆլորայի ուսումնասիրմանը, որի արդյունքները հրատարակել են հատուկ գրքույկով։

Բազմահատոր «Հայաստանի ֆլորան» մենագրության կազմման հենց սկզբից, 1952 թվականից, Ռ. Կարապետյանն ակտիվ մասնակցություն է ցուցաբերում տեղական հերբարիումի լրացման գործում՝ առավելապես հանրապետության այն շրջաններից, որոնց ֆլորան լրիվ չի ներկայացված տեղական հերբարիումում։ Նրա հավաքած բույսերից նկարագրված են Հայաստանի ու Կովկասի ֆլորայի համար մի շարք նոր տեսակներ։ Երկու տասնամյակ շարունակ Ռուզաննա Կարպետյանն իր կոլեգաների հետ կազմում էր Հայաստանի ֆլորայի բոլոր ցեղերի և տեսակների հայերեն անվանումները։ Մասնակցելով հատուկ գիտարշավների դեպի Հայաստանի տարբեր շրջանները, բույսերի ժողովրդական անունների հավաքման համար, զուգահեռաբար ուսումնասիրելով գրականության սկզբնաղբյուրները նա մեծ ավանդ մտցրեց բույսերի հայերեն անունների քարտարանի (ուր հաշվվում է 61 հազար քարտ) ստեղծման գործում։

Վերջին տարիներին իր կոլեգաների հետ նա մասնակցում էր «Օգտակար բույսերի բառարան»-ի կազմմանը, ուր ընդգրկված են ժողովրդական կենցաղում համեմատաբար լայնորեն օգտագործվող բույսերի շուրջ 1500 անուն։ Նա շուրջ 20 գիտական աշխատանքների հեղինակ է։

Բացի գիտական աշխատանքներից նա ակտիվորեն մասնակցում էր ինստիտուտի կուսակցական ու հասարակական աշխատանքներին և արժանացել է կառավարական պարգևների և խրախուսանքի։

Ռ. Կարապետյանն օժտված էր մարդկային բնավորության շատ բարձր արժանիքներով՝ համեստ, բարեխիղճ, լավատես և սրտակից ընկեր էր։ Նա սիրված և հարգված էր ինստիտուտի ողջ կոլեկտիվի կողմից։ Նրա բարի անունն ու հիշատակը կապրի բոլոր նրանց սրտերում, ովքեր ճանաչում են նրան։